

## Հարգելի գործընկերներ

«Ազատ քաղաքացի» քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոնը՝ Վիշեգրադի միջազգային հիմնադրամի (Սլովակիա) աջակցությամբ «Վ4-ը հանուն ՏԻՄ-երում երիտասարդների ներգրավման» ծրագրի շրջանակներում կազմակերպում է մարզային աշխատաժողովներ երիտասարդ քաղաքացիական ակտիվիստների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հետ ծանոթացման և դրանց վերահսկողության ուղղությամբ նրանց կարողությունների զարգացման նպատակով:

Հերթական աշխատաժողովը կկայանա Արմավիրի մարզի Արմավիրի և Բաղրամյանի ենթատարածաշրջանների երիտասարդության համար և տեղի կունենա ս.թ. դեկտեմբերի 15-ին, կիրակի օրը, Արմավիրում:

## Ծրագրի մասին

### Նպատակը.

Զարգացնել երիտասարդ քաղաքացիական ակտիվիստների կարողությունները ՏԻՄ-երի գործունեության մեջ ներգրավման, դրանց մշտադիտարկման և վերահսկողության գործում, բարձրացնել նրանց իրազեկվածությունը Եվրոպական կառույցների, ինստիտուտների և Հայաստանում իրագործվող դրանց ծրագրերի վերաբերյալ:

### Ծրագրի մասնակիցները պետք է.

- Լինեն 16-30 տարեկան:
- Հետաքրքրված լինեն սեփական համայնքների անցուդարձով, դրանց զարգացման, ռեսուրսների կառավարման և ՏԻՄ գործունեության հարցում:

### Այլ.

Տեղերի սահմանափակ լինելու պատճառով միայն 20 ընտրված երիտասարդներ հնարավորություն կստանան մասնակցելու աշխատաժողովին:

Ընտրված երիտասարդները դեկտեմբերի 14-ին էլ.փոստով կտեղեկացվեն միջոցառման վայրի մասին:

- Աշխատաժողովի լավագույն 1-2 մասնակիցներ կընտրվեն մասնակցելու համար 2020թ. հուլիսին տեղի ունենալիք 5-օրյա Ամառային դպրոցին, եւս 4 հոգի կիրավիրվեն մասնակցելու 2020թ. տեղի ունենալիք Երիտասարդական համաժողովին:
- Հայաստանից բոլոր մարզերի մասնակիցներից՝ իրենց համայնքի, այդ թվում ՏԻՄ-երի որեւէ խնդրի և դրանց լուծման ուղիների մասին 1 էջանոց ծրագիր/հոդված ներկայացրած լավագույն տասը կարժանանան 100.000 դրամ մրցանակի:
- Հայաստանից լավագույն 10 մասնակիցների համար «Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ-ն կդիմի Վիշեգրադի հիմնադրամին՝ ֆինանսավորելու համար նրանց ուսումնական 10-օրյա այցելությունը դեպի Վիշեգրադ-4 երկրներ՝ Չեխիա, Լեհաստան, Սլովակիա և Հունգարիա՝ կրկնելով 2017-ի հաջողված փորձը (նախորդ ծրագրի մասին պատմող հոլովակը տե՛ս այս հղմամբ. <https://www.youtube.com/watch?v=BrOn4Zkz8wk> ) :

Աշխատաժողովին մասնակցելու՝ ստորեւ ներկայացված հայտը անհրաժեշտ է լրացնել և ուղարկել [freecitizen.cisc@gmail.com](mailto:freecitizen.cisc@gmail.com) էլ. հասցեով ոչ ուշ քան ս.թ. դեկտեմբերի 13-ը:

Աշխատաժողովի աշխատանքային լեզուն հայերենն է:

## «Վ4-ը հանուն ՏԻՄ-երում երիտասարդների ներգրավման»

### Աշխատածրոյով

Դեկտեմբերի 15, 2019, քաղաք Արմավիր

09:50-10:00	Մասնակիցների գրանցում
10:00-10:10	<b>Բացում</b>
10:10-10:40	Մասնակիցների ներկայացում, ծանոթացում
10:40-11:00	Մասնակիցների գիտելիքների բացահայտում, կարիքների և ակնկալիքների ներկայացում
11:00-12:00	Կառույցների և իրականացվող ծրագրերի ներկայացում. Եվրոպական միություն և Եվրոպայի խորհուրդ, Արևելյան գործընկերություն և Վիշեգրադ 4 ձևաչափեր, դրանց փորձը ՏԻՄ զարգացման գործում. <i>Հովսեփ Խուրշուդյան</i>
12:00-12:30	<i>Սուրճի ընդմիջում</i>
12:30-13:00	Հարց ու պատասխան
13:00-14:00	Ընդհանուր տեղեկություններ Տեղական ինքնակառավարման մասին. Ի՞նչ է համայնքը, որո՞նք են դրա ռեսուրսները, ինչպես է ձեռավորվում եւ ծախսվում դրա բյուջեն <i>Էմին Երիցյան</i>
14:00-15:00	<i>Ճաշ</i>
15:00-16:00	Ինչպե՞ս եւ ինչու ներգրավվել ՏԻՄ աշխատանքներին եւ/կամ վերահսկել դրանք. Եվրոպական փորձը <i>Էմին Երիցյան</i>
16:00-16:30	Հարց ու պատասխան
16:30-17:00	<i>Սուրճի ընդմիջում</i>
17:00-18:00	Խմբային աշխատանք՝ նվիրված մասնակիցներին մտահոգող տարածքային հիմնախնդիրների քննարկմանը և լուծումների համատեղ փնտրտուքին, դրանում ՏԻ մարմինների ներգրավման կարելիության գնահատմանը: Վերջում խմբերը ներկայացնում են արդյունքները: <i>Էմին Երիցյան, Հովսեփ Խուրշուդյան</i>
18:00-18:30	Հանդիպում ՏԻՄ ներկայացուցիչների հետ ( <i>ենթակա է հաստատման</i> )
18:30-18:40	<b>Փակում</b>

### Ֆինանսավորմամբ՝



# ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

(Խնդրում ենք լրացնել էլեկտրոնային եղանակով)

## I. Տեղեկություններ հայտարարի մասին.

1. Անուն, ազգանուն.
2. Սեռ. <input type="checkbox"/> արական <input type="checkbox"/> իգական
3. Տարիք.
4. Քաղաքացիություն.
5. Ազգություն
6. Կրթություն. <input type="checkbox"/> միջնակարգ <input type="checkbox"/> բարձրագույն
7. Խոցելի խմբերի ներկայացուցիչ ես/կամ սահմանափակ կարողություններով անձ <input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
8. Հիմնական մասնագիտություն/զբաղմունք.
9. Հասցե.
10. Հեռախոս.
11. Էլեկտրոնային հասցե
12. Facebook, Twitter կամ այլ սոցիալական ցանցում առկա անձնական էջի հասցե. .....

## II. Խնդրում ենք մատնանշել մեկ խնդիր ձեր փարածաշրջանից, որը դուք կուզեիք քննարկել աշխատաժողովի ընթացքում:

--

Աջակցությամբ Վիշեգրադի միջազգային հիմնադրամի